

**«Շիրակի Մ. Նալբանդյանի Անվան Պետական Համալսարան»
Հիմնադրամ**

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ «Տեղեկատվական և հեռահաղորդակցային տեխնոլոգիաների
կիրառումը ուսուցման պրոցեսում, մասնակի հեռահար
ուսուցում»

Կատարող՝ Ռիտա Մուրադյան

(ՀՀ ԿԳՄՄՆ Վ. Թեքեյանի անվան Գյումրու «2 ավագ» դպրոցի ՊՈԱԿ)

Ղեկավար՝ Գոհար Մկրտչյան

Տեղեկատվական և հեռահաղորդակցային տեխնոլոգիաների կիրառումը ուսուցման պրոցեսում, մասնակի հեռահար ուսուցում

Մարդկության զարգացման պատմության մեջ տեխնոլոգիաները հանդիսացել են հզոր ուժ և խթան:21-րդ դարում տեխնոլոգիաները փոխել են ամեն ինչ՝ մարդկանց ապրելակերպը, սնվելու ձևը, տեղափոխվելու միջոցները, բջջային հեռախոսները, հաղորդակցման ձևն ու մտածելակերպը: Այսօրվա սերունդը դեռևս նախադպրոցական տարիքից, մեծանում է ՏՀՏ-ի միջավայրում և դրանց ակտիվ կիրառմամբ:Կրթության հետազոտողները ընդունում են ,որ 21-րդ դարում բեխաների մոտ զարգացած է ինտուիցիան և նրանք տարբերվում են նախորդ սերունդներից:Նրանք շատ ավելի արդյունավետ են օգտագործում ՏՀՏ-ն, որպես ապրելու,սովորելու և շփվելու միջոց:Զարգացած երկրները համոզված են,որ առանց ՏՀՏ-ի կիրառության,այսօր գրեթե անհնար է հասնլ ինչ-որ արդյունքի:ՏՀՏ-ի սրընթաց զարգացումը նոր պահանջներ դրեց կրթական համակարգերի առջև ինչպես ողջ աշխարհում,այնպես էլ Հայաստանում:

Վերջինիս դերի կարևորությունը ապահովում են մարդկանց համագործակցությունը, նրանց հասանելիությունը համաշխարհային ինֆորմացիոն ռեսուրսների և այդ ոլորտներում մարդկանց պահանջների բավարարումը:

20-րդ դարում ՏՀՏ-ի կատարած փորձերը բոլոր ոլորտներում եղել են հաջողված: Այսօր ՏՀՏ-ն մտել է կրթության ոլորտ,որը ենթադրում է նոր մոտեցումներ դասավանդման մեջ,նոր ձեռքբերումներ կրթության մեջ: Այս պայմաններում կարևորվում է դպրոցի դերը:

ՏՀՏ-ն պետք է ներթափանցի ցանկացած առարկա ուսումնական նյութն առավել կենդանի,հետաքրքիր և գրավիչ դարձնելու համար: Դպրոցական կրթական համակարգում բարեփոխումների հաջողությունը հիմնականում կախված է ուսուցիչների կատարողականից, քանի որ նրանք հանդիսանում են «բարեփոխումների հիմնական կրողները»:

Ժամանակի պահանջներին համապատասխան կրթական պրոցեսի նոր մոդելը կարողանում է իրականացնել առաջադրված խնդիրների լուծումները: Այստեղ մեծ դեր է խաղում SՀS միջոցների ակտիվ կիրառումը, քանի որ

- Հանդիսանում է անհրաժեշտ պայման կրթության որակը բարձրացնելու և նորացնելու համար:
- Խթանում է ստեղծագործ մտածողությանը;
- Օգնում աշակերտներին ակտիվորեն ընդգրկվել ուցումնական գործընթացում, խորացնել ուսուցանվող նյութի իմացությունը:
- Հանդիսանում է էֆեկտիվ միջոց ուսուցման մեթոդների և ձևերի զարգացման համար:
- Աշակերտներին թույլ է տալիս ձեռք բերել նոր արժեքներ, որոնք պետք են ժամանակակից հասարակության մեջ ապրելու և աշխատելու համար:
- Նպաստում է աշակերտների մոտիվացիայի աճին:
- SՀS-ի գործածությամբ հնարավոր է ավելի հարուստ ,բազմերանգ ու դինամիկ նյութ ստեղծել և օգտագործել:
- SՀS-ն թույլ է տալիս ուսուցչին ու աշակերտին հաղորդակցվել միևնույն միջավայրում և «նույն լեզվով»:
- Աշակերտների գիտելիքները հարստացնելու և խորացնելու, հմտությունները զարգացնելու կարողություն:
- Համակարգիչը օգնում է ուսուցչին ուսուցման գործընթացը բովանդակալից ու հետաքրքիր անցկացնելու համար:
- SՀS-ն բարելավում և կատարելագործում է ուսումնական գործընթացը, օգնում է դպրոցներին վերափոխել:

Հանրակրթության նպատակը գիտակից քաղաքացի ձևավորելն է և օր-օրի զարգացող ժամանակակից աշխարհում ճիշտ կողմնորոշվելն է:

SՀS-ի հիմնական նպատակն է՝ իրազեկ, տեխնոլոգիական ձեռքբերումներն արդյունավետ գործածելու ունակություն ունեցող բարոյական և օրինապահ անհատի դաստիարակում, որը կկարողանա ինքնուրույն ձեռք բերել, կառավարել, մշակել, գնահատել, վերլուծել տեղեկատվությունը և դրա հիման վրա ինքնուրույն որոշման կայացումը, այնպիսի անհատի դաստիարակումը, որը գիտակցում է սեփական պատասխանատվությունը երկրի շահերի, ավանդույթների և արժեքների

նկատմամբ, ինքն է ստեղծում արժեքներ և սեփական լուրման է ներդնում հասարակության առաջընթացի գործում:

Հանրակրթական դպրոցն ավարտելուց հետո աշակերտը պետք է բազային գիտելիքներ ունենա ՏՀՏ-ից, ունենա դրանց կիրառման գործնական փորձառություն:

Հայաստանում ևս կրթական գրեթե բոլոր փաստաթղթերում կարևորում և խրախուսվում է ՏՀՏ-ի կիրառությունը դպրոցներում : Ուսումնական պլաններում բոլոր առարկաներից պարտադիր նախատեսված է ՏՀՏ-ի ներգրավմամբ դասեր, քանի որ բոլոր դպրոցներն համակարգչային սենյակ և ինտերնետ կապ ունեն, իսկ ուսուցիչները անցնում են համակարգչային հմտությունների վերապատրաստում: Ներդրվել է էլեկտրոնային գնահատման համակարգը՝ Dasaran.am:

Այնուհանդերձ ուսուցիչների մեծ մասը չի գիտակցում ՏՀՏ-ի անհրաժեշտությունը և ուղղակի կատարում է ԿԳՆ պահանջները, նրանցից շատերը էլեկտրոնային նյութերի կիրառումը համարում են աշխատատար, ժամանակատար լրացուցիչ աշխատանք, որի համար իրենք չեն վճարվում:

Այսօր ՀՀ-ում ուսուցչի աշխատավարձը ցածր է, որն էլ հետ է պահում նրանց լրացուցիչ աշխատանք կատարելուց: Ուսուցիչը շահագրգիռ չէ ՏՀՏ-ի կիրառմամբ որպես նորարարություն, այդ պատճառով պետք է կիրառել տարբեր խրախուսական մեթոդներ:

Ուսուցիչը պետք է հասկանա, որ ՏՀՏ-ի կիրառումը հեշտացնում է թե՛ իր և թե՛ աշակերտների առարկան հասկանալու խնդիրը: Իսկ ուսուցիչը պետք է ունենա ՏՀՏ-ն կիրառելու հմտություններ:

Դպրոցների տեխնիկական ապահովվածությունը

Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի տվյալներով ՀՀ բոլոր դպրոցներում կան համակարգչային սենյակներ և բոլոր 1436 դպրոցները միացաց են ինտերնետ ցանցին: Համակարգիչներով ապահովվածությամբ ամենաբարձր ցուցանիշը Երևանում է, ամենացածրը՝ Սյունիքի մարզում: Համակարգիչների քանակից բացի շատ կարևոր է դրանց տեղաբաշխվածությունը դպրոցներում: Հիմնականում տեղադրված են մի սենյակում, որը սահմանափակում է դրանցից օգտվելու հնարավորությունները:

Ուսուցիչներից շատերը խուսափում են ամբողջ դասարանին տանել համակարգչային սենյակ SՏՏ դասեր անցկացնելու, պատճառաբանելով, որ համակարգիչների սակավության պատճառով հնարավոր չէ:

Ուսուցիչների պատրաստվածությունը

Ուսուցիչները 5 տարին մեկ վերապատրաստում են անցնում՝ թարմացնելով համակարգչային գիտելիքները: Նման դասընթացների է մասնակցել ուսուցիչների գրեթե 80%: Սակայն հարցումները ցույց են տվել, որ նրանց 20% երբեք չի օգտագործել SՏՏ-ն դասավանդման համար, 40% SՏՏ-ն կիրառում է ամիսը 1-2 անգամ: Համակարգիչ օգտագործելը ուսումնական պլանով նախատեսված պարտադիր չափորոշիչ է: Ուսուցիչներին նաև պարտադրվում է լրացնել dasar.am-ի էլեկտրոնային մատյանները, ինչը շատերը համարում են լրացուցիչ չվճարվող աշխատանք և այն, որ այդպես ծնողը կտրվում է դպրոցից:

Ուսուցիչներին հատկապես ավագ սերունդը ցանկություն չունի փոխելու դասավանդման մեթոդները, նախընտրում է իր դասական մեթոդը, իսկ երիտասարդներն ավելի հակված են SՏՏ-ն ինտեգրել դասապրոցեսի մեջ, սակայն ունեն հմտությունների և տեխնիկայի պակաս: Գյումրիում ֆիզիկայի ուսուցիչների վերջին վերապատրաստման ընթացքում (2018թ.) սովորեցինք աշխատել էլեկտրոնային գրատախտակով, սակայն Գյումրիում այն ընդամենը 2 դպրոցներում կա տեղադրված:

ՀՀ-ում կան շատ դպրոցներ, որոնց տնօրենները կարևորում են SՏՏ-ի կիրառումը, սակայն կան տնօրեններ, որոնք դեռ հակված են կարծել, թե համակարգիչը վնասում է աշակերտներին և գրքից պետք է գիտելիք ստանալ:

Դպրոցներում օպերատորի անելիքը հստակեցված չէ և նրանք կատարում են համակարգչի հետ կապված բոլոր գործերը: SՏՏ-ն անհրաժեշտ է կիրառել տարրական դպրոցներում ուսումնական նյութն առավել գրավիչ և դյուրըմբռնելի ներկայացնելու համար: Միջին դպրոցի ցածր դասարանում ինֆորմատիկայի դասավանդման ընթացքում շեշտը դրվում է համակարգչով աշխատելու հիմնական հմտություններ մշակելու, ստեղծագործությունը խրախուսելու վրա: Առարկայի դասավանդումը նպաստում է ժամանակակից համակարգչային ուսուցողական

ծրագրերով այլ առարկաներից որոշակի նյութ հաղորդելու, աշակերտների կողմից դրա յուրացմանը:

Միջին դպրոցի բարձր դասարանում ինֆորմատիկայի դասավանդման հիմանական նպատակը առարկայի վերաբերյալ հիմանարար գիտելիքների յուրացմանը, ինֆորմատիկայի դերի ընկալումը, համակարգչային հմտությունների զարգացումը, կիրառական ծրագրերով աշխատելու կարողության ձևավորումը:

Ավագ դպրոցի համապատասխան հոսքում իրականացվում է ինֆորմատիկայի խորացված ուսուցում:

Ավագ դպրոցի մյուս հոսքերում ինֆորմատիկայի ուսուցումը զարգացնում է ոչ բարդ կիրառական ծրագրերի ուսումնասիրության, կյանքի պահանջների և ապագա աշխատանքային գործունեության համար համակարգչային անհրաժեշտ հմտություններ:

SZS-ի կիրառմամբ մանկավարժական նոր տեխնոլոգիաները ստեղծում են լայն հնարավորություններ կրթության առջև ծառայած խնդիրների լուծման համար: Չնայած ուսուցման կազմակերպման դասական միջոցները (տպագիր գրականություն, նյութական դիտակտիկա, լսարան, դասախոսություն, բանավոր քննություն, ուսուցման օբյեկտ-սուբյեկտ կենդանի փոխազդեցություններ) դեռևս շարունակվում են լայն գործածվել, սակայն այս միջավայր ակտիվորեն ներթափանցում են ուսուցման կազմակերպման ոչ ավանդական միջոցները (համակարգիչ, ուսուցման էլեկտրոնային ծրագրեր, ցանցեր, տվյալների բազաներ, հեռահար ուսուցման համակարգեր, գիտելիքների գնահատման համակարգեր): Այս գործընթացները պայմանավորված են համակարգչային տեխնոլոգիաների, ծրագրային ու տեղեկատվական պաշարների անընդհատ կատարելագործմամբ:

Ժամանակակից հասարակության կողմից կրթության առջև դրված խնդիրների լուծումը ենթադրում է փորձի և գիտելիքի փոխանցման և յուրացման փոխարեն առաջ է քաշվում գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման, ինֆորմացիայի փնտրման, վերափոխման և կիրառման կարողությունների ձևավորումը, ստեղծագործական, քննադատական մտածողության զարգացումը:

Ուսուցման նոր ձևերի շարքում մեծ տեղ է գրավում հեռահար ուսուցման համակարգը՝ հիմնված SZS-ի վրա: Այն ստեղծում է մանկավարժական և տեղեկատվական տեխնոլոգիաների համակցման և ընդհանուր կրթական

տեղեկատվական հարթության համար (ինտերնետի, Microsoft, Netscape տեխնոլոգիաների միջոցով) ընձեռնելով լայն հնարավորություններ կրթության առջև դրված խնդիրների իրագործման համար: Հեռահար ուսուցումը ժամանակակից պահանջներին համապատասխան կրթության կազմակերպման արդյունավետ ձևերից է: Կրտության ավանդական ձևերում կենտրոնական դերը ուսուցչին էր, որը կատարում էր գիտելիքների կրողի և փոխանցողի դեր: Աստիճանաբար փոխարինելու են գալիս նոր մոդելները, որտեղ «գլխավոր գործող անձը» դառնում է սովորողը, իսկ ուսուցման նպատակը՝ ժամանակի պահանջներին համապատասխան գիտելիքների բազայի ստեղծումն է, ինչպես նաև ինքնություն ստեղծագործական աշխատանք կատարելու կարողությունների, հմտությունների մշակումը:

Հեռահար ուսուցման ճկուն համակարգը թույլ է տալիս աշակերտին ստանալ գիտելիքներ՝ անկախ գտնվելու վայրից, հեռավորությունից և ժամանակից: Այն դիտվում է որպես «ուսուցում S2S միջոցների կիրառման» որի ընթացքում ուսուցման օբյեկտը և սուբյեկտը, գտնվելով տարածական և ժամանակային հեռավորության վրա, մասնակցում են ուսումնական պրոցեսին:

Հեռահար ուսուցումը լուծում է այնպիսին խնդիրներ, որոնք ավանդական ուսուցման համակարգը ի գորու չէ իրագործել: Այստեղ հիմնականը աշակերտի ինքնուրույն ստեղծագործական գործունեությունն է, որը ենթադրում է S2S համակցում, իսկ վերջիններս ապահովում են ինտերակտիվություն և ուսուցման պրոցեսի արդյունավետության բարձրացում:

Ըստ իս նպատակահարմար է հեռահար ուսուցման համակցումը տարիների ընթացքում փորձված ու հարակեցված ավանդական ուսուցման համակարգի հետ, մասնավորապես ուսումնական հաստատություններում հեռահար ուսուցման I տիպի՝ մասնակի հեռահար ուսուցման կիրառումը, աշակերտները սովորում են ավանդական դպրոցներում և ուսուցչի հետ համատեղ փոխգործակցում հեռահար տեղեկատվության, այլ հաստատություններում սովորող աշակերտների, մասնագետների կամ հեռահար ուսուցման կենտրոնների ուսուցիչների հետ, նրանց հետ պարապմունքների անցկացման նպատակը որոշ առարկաների, թեմաների խորացված ուսուցումն է: Ուսուցիչը կարող է կիրառել նաև հեռահար ուսուցման դասընթացը դպրոցական դիմահար ուսուցման պրոցեսում:

Հեռահաղորդակցումը կատարվում է ինտերնետի միջոցով, որը նաև տեղեկատվական և դիտակտիկ օբյեկտների կրողն է:

Ուսումնական պրոցեսի կենտրոնը պահպանվում է դպրոցում, իսկ հեռահար ուսուցումը կրում է լրացուցիչ բնույթ: ՏՀՏ-ն իր սարքային և ծրագրային ապահովումներով, հարուստ ու բազմազան դիտակտիկ նյութերով, էլեկտրոնային ուսուցանող և կիրառական ծրագրերով, տեղեկատվական պաշարներով, հեռահաղորդակցային կապով նպաստում են ավանդական դպրոցի ընդհանուր կրթական խնդիրների լուծմանը: Ուսուցման դիմահար և հեռահար ձևերի ինտեգրման շնորհիվ լուծվում են կրթության առջև դրված հիմնական խնդիրները՝ սովորողների մոտ ժամանակակից հասարակության պահանջներին համապատասխան գիտելիքների բազայի ստեղծում, ինքնուրույն ստեղծագործական աշխատանք կատարելու կարողությունների, հմտությունների մշակում, որոշակի անձնային որակների ձևավորում:

Մասնակի հեռահար ուսուցումն իրենից ներկայացնում է ավանդական և հեռահար ուսուցման ձևերի ու բովանդակության համատեղում: Հեռահար ուսուցման բաղադրիչները կիրառվում են դպրոցում՝ հաշվի առնելով ուսուցման 2 ձևերի՝ մանկավարժական և մեթոդաբանական առանձնահատկությունները: Այն պատկերված է այսպես՝

ուսուցիչ և ինտերնետ → աշակերտ

կամ

ուսուցիչ → ինտերնետ և աշակերտ

Մասնակի հեռահար ուսուցումն ունի մի շարք առավելություններ մի կողմից առկա են կենդանի շփումներ ուսուցիչ և աշակերտի միջև, մյուս կողմից աշակերտը միայն գիտելիքների սպառող-հետևորդից դառնում է սեփական նախապիրությունների ու հմտությունների ստեղծող-կերտողը: Ուսուցման այս ձևի շնորհիվ աշակերտներին ընձեռնվում են լայն հնարավորություններ՝ օգտվելու տվյալների տեղեկատվական համաշխարհային պաշարներից, հեռահաղորդակցային ցանցից:

Ուսուցումը կատարվում է online կամ offline ռեժիմների կիրառմամբ: Սովորողները հնարավորություն են ստանում հաղորդակցվելու ոչ միայն ուսուցչի, այլև հեռավորության վրա գտնվող հասակակից-համախոհների, բարձրակարգ մասնագետների հետ:

SՀS-ի կիրառումը ենթադրվում է դպրոցականների կրթության ու դաստիարակության հարցերի նոր մոտեցումներ, որոնք հիմնված են շփումների, մտքերի, գաղափարների, նորը բացահայտելու բնական ցանկության վրա:

Ժամանակակից մանկավարժներին հեռահար և դիմահար ուսուցումների համատեղ կազմակերպման, կրթական համապատասխան միջավայր ստեղծելու համար անհրաժեշտ են այնպիսի դիդակտիկ և մեթոդական նյութեր, որոնք հնարավորություն կտան աշակերտների գործելու առավել ակտիվ և արդյունավետ նպաստելով նրանց ստեղծագործական ինքնակայացմանը, օգնելու նրանց բացահայտել կրթության, իչպես նաև սեփական անձի զարգացման կարևորությունն ու դրդապատճառները: Հեռահար ուսուցման պրոցեսը արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ է նրա առավելությունների ու թերությունների օբյեկտիվ գիտակցում և գնահատում, խնդիրների հատուկ ձևակերպում:

Առավելություններ

- Կենտրոնական տեղ է գրավում աշակերտի ինքնուրույն իմացական-ճանաչողական գործունեություն:
- Կրում է հսկայական տեղեկատվական նյութ:
- Տալիս է մեծ հնարավորություն սինթեզելու կրթության բովանդակության բոլոր բաղադրամասերը:
- Տալիս է ուսուցման մեթոդների և միջոցների ընտրության լայն հնարավորություն:
- Ապահովում է ուսուցանվող նյութի ամբողջական ընկալումը, յուրացումը, մտապահումը:
- Բարձրացնում է կոլեկտիվ աշխատանքի արդյունավետությունը:
- Տալիս է հետադարձ կապի հնարավորություն:
- Արդյունքները տարբեր ֆորմատներով ներկայացնելու հնարավորություն:
- Ուսուցման պրոցեսն ընթանում է ժամանակի զգալի խնայողությամբ:
- Խթանում է ինքնուրույնությունը, քննադատաբար մտածելու, պատասխանատվության զգացումը, նպատակաուղղվածությունը, համատությունը, որոշումներ ընդունելու կարողությունը, բարձրացնում է ինտելեկտուալ մակարտակը:

- Ուսումնական պրոցեսում գիտատեխնիկական մտքի ու մանկավարժական նոր ձեռքբերումների, SՆS-ի կիրառումը ժամանակակից պահանջներին
- համապատասխան որակներ ունեցող անձի ձևավորմանը, նրա առաջընթացին դեպի համաշխարհային 1 ընդհանուր հարթության:

Թերություններ

- Կենդանի շփման պակաս
- Թերշարժունակություն
- Փնտրման ճանապարհների բարթություն
- Մարքերի աշխատանքը խափանող վիրուսների փոխանցման վտանգ
- Կրթական համակարգի տեղեկատվական հիմքի սխալ կողմնորոշման վտանգ
- Համակարգչային տեխնիկայի և ինտերնետի անհասանելիություն
- Լեզվային արգելքի առկայություն
- Սովորողների սոցիալական մեկուսացման, կենդանի հաղորդակցման կարողությունների թերացման վտանգ
- Էլեկտրոնային նյութերի, ծրագրային և մեթոդական ձեռնարկների ապահովման պակաս
- Սովորողների ինքնուրույն արդյունավետ աշխատանքի հոգեբանական անպատրաստվածություն

Խնդիրները

- Ուսումնական պրոցեսի մանրակրկիտ կազմակերպում, սովորողի ուսումնական գործունեության պլանավորում, նպատակների ու խնդիրների հատուկ ձևակերպում
- Էլեկտրոնային նյութերի, համակարգչային տեխնիկայի հասանելիության ապահովում
- Էլեկտրոնային դասագրքերի իտերակտիվության աստիճանի բարձրացում
- Համակարգչային միջոցների կիրման և ծրագրերի իմացության ապահովում
- Համապատասխան սարքավորումներով, նյութական բազայով հագեցած մուլտիմեդիաին դասարանների ստեղծում, մատչելի և որակյալ ինտերնետ կապի ապահովում

- Ուսուցման պրոցեսի արդյունավետության բարձրացման նպատակով սովորողներին ներկայացվող ապահանջների կատարման վերահսկում՝ գիտելիքների ստուգման և գնահատման համակարգերի միջոցով
- Ուսուցիչ-մասնագետների պատրաստում, վերաորակավորում, մեղիահոգեբանների և մեղիամանկավարժների պատրաստում
- Ծրագրերի, ուսումնամեթոդական ձեռնարկների ստեղծում և կատարելագործում

Եզրակացություն

SՀS կիրառմամբ ուսուցման նպատակն է ժամանակակից հասարակության պահանջների համապատասխան մտավոր,բարոյական կերպար և անձնային որակներ ունեցող,բազմակողմանի զարգացած անհատի ձևավորումը՝ պատրաստ աշխատանքի ,անընդհատ կրթության և ինքնակրթության, նպատակաուղղված ստեղծագործական գործունեության, գիտելիքների, կարողությունների և հմտությունների խորացման և կատարելագործման՝ ողջ կյանքի ընթացքում:

Մակայն առայժմ և ըստ իս առաջիկայում SՀS կիրառմամբ ուսուցման նպատակը անիրագործելի է,քանի որ

- Դպրոցներում բացակայում է անհրաժեշտ նորացված տեխնիկական և ծրագրային միջոցները
- Ուսուցիչների SՀS-ին տիրապետելու հմտությունների թերացումը,այս ոլորտում նրանց փորձի պակասը
- Անհրաժեշտ ուսումնական էլեկտրոնային ձեռնարկների ձեռքբերման դժվարությունները կամ հայերեն լեզվով նյութերի սակավությունը

Այն հարցին, թե որքանով է SՀS-ն կիրառվում հանրակրթության մեջ և նպաստում կրթության որակի բարձրացմանը,պետք է փաստել,որ այսօր SՀS-ն կիրառվում է հազվադեպ, այն էլ հիմնականում պատրաստված ուսումնական պլանով և դա չի նպաստում կրթության որակի բարձրացմանը:

Գրականություն

1. ՀՀ կառավարության 2018թվ. -ի որոշում
2. Хуторской А. В. <<Современная дидактика>> 2001г.
3. Хуторская Л. Н. <<Информационная педагогика>>
4. Акуленко В.Л. <<Применение новых технологий в образовании>>. Материалы XV Международной конференции
5. Վ. Հակոբջանյան, Կ. Նասիրյան, Էդ. Սանթրոսյան-Կրթական համակարգը և ազգի ուժը
6. Монахов О. <<Дополнительный характер дистанционного образования>>
7. www.learning.arm.odn.am-հեռավար ուսուցում